ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1 յունիսի

Մեր հասարակութեան ցածր դասով հետաքրքրվող չը կայ, նրա կեանքը, ներքին կազմակերպութիւնը, տնտեսական դրութիւնը, մի խօսքով նրա բիւրաւոր ցաւերը քննող, դարմանելու կարեւոր միջոցները ցոյց տուող չը կայ։ Ամենքը խորշում են նրանից, մոռանալով որ հասարակական կեանքում գործողների մեծամասնութիւնը այդ տգէտ և բարոյապէս ու նիւթապէս խեղճ ու աղքատ դասի արտադրութիւնն է... Հէնց այս է պատճառը, որ մենք հրաւիրում ենք մեր լրագիրների պատուելի թղթակիցներին, փոխանակ մանր մունր վէճերի, անձնական նեղ ու սահմանափակ հաշիւների ետեից ընկնելու, սրան նրան պախարակելու, սրան նրան վարկը վայր գցելու, ծանօթանալ ստորին դասակարգի, նրա բազմադիմի պէտքերի հետ, քննել նրան և լուսաբանել նրա կեանքի մութ կողմերը տեղական մամուլի միջնորդութեամբ, միջոց տալ մամուլի և հասարակութեան ներկայացուցիչներին խորհելու, գրելու, քննելու նրանց արտայայտած մտքերի իրաւացի կամ անիրաւ լինելը և ծանօթ լինելով ժողովրդի՝ իսկապէս նրա ստորին դասակարգի ցաւերի և վէրքերի հետ, ըստ այնմ գործել և դարման տանել նրան։

Այս անգամ մենք վերցնում ենք այդ դասակարգի մի որոշեալ շրջանը,—մշակները։

Ոչ ոք մեղանում, մինչև հիմայ, չէ հետաքրքրվել հասարակութեան այս դասով, որ իր քանակութեամբ կազմում է նրա մի պատկառելի մասը։ Ոչ մէկը մեր լրագիրներից ուշադրութեան չէ արժանացրել այս դասակարգը, ոչ մէկը չէ հետաքրքրվել նրանով, կարծես նա հասարակութեան խորթ անդամը լինէր....

Իւրաքանչիւր տարի հարիւրաւոր խմբերով քանի մի հազար հոգի այդ թշուառ արարածներից, ոչինչի տեղ չը դնելով երկար ճանապարհի անտանելի նեղութիւնները, խռնվում են Թիֆլիս, Կովկասի մայր քաղաքը, նրա մտաւոր ու նիւթական ոյժի կենտրոնը։

Նրանցից շատերը գալիս են ոչ միայն Կովկասի հեռաւոր անկիւններից՝ Հին-Նախիջևանից, Երևանից, Զանգեզուրից, Սուրմալուից, այլ և Պարսկաստանից, գլխաւորապէս Աալմասից և Թիւրքաց-Հայաստանից։ Մշակների այս ահագին բազմութիւնը, որ ամեն տարի նշանաւոր տոկոսներով կրկնապատկվում է, պատկանում է գլխաւորապէս ազգաբնակութեան մի որոշ դասին, որոնք բոլորն էլ երկրագործ են....

Ի՞նչն է ստիպում արդեօք այդ բազմութեանը բարձի թողի անել իր հայրենիքը, տուն ու տեղը, ընտանիքը և նրա հազար ու մի հոգսերը, իր կալուածները ու գայ Թիֆլիս կամ որ և է ուրիշ մեծ կամ փոքր կենտրոն մշակութիւն՝ բեռնակրութիւն անել, աչքի առաջ ունենալով հազար ու մի տանջանք, զրկանք և նեղութիւն....

Գուցէ ընթերցողը կը կարծի, թէ դրանք իրանց հայրենիքում չունեն ոչինչ ստացուածք, որով կարողանային ապահովել իրանց նիւթական դրութիւնը. ոչ, նրանցից շատերը, իրանց հայրենիքում մեծամեծ կալուածների տէր են, ունեն քանի մի այգիք, վարելահողեր, արօտներ և քանի մի տասնեակ, երբեմն հարիւրաւոր տաւար ու ոչխար։ Բայց և այնպէս նրանք աղքատ են՝ անկարող են իրանց հարկը տալ և ստիպված են մշակութիւն՝ բեռնակիր դրաստութիւն անել։

Գուցէ ընթերցողը զարմանքով կը հարցնէ. «Մթթէ այդքան ստացուածք ունեցողը աղքատ կարող է լինել, մթթէ նա բեռնակրութեան աստիճանին կարող է հասնել...» Այո՛, կը պատասխանենք։

Գուցէ այդ անկարելի, անհաւատալի լինի մի ուրիշ տեղ, ուր ժողովուրդը գիտակցաբար կարողանում է օգուտ քաղել իր կալուածքից, ուր նրա արդիւնաբերութիւնները չեն կորչում, ուր միջոց կայ նրանցից օգուտ քաղելու, ուր կայ տնտեսագիտութիւն, ուրեմն և տնտեսական ապահովութիւն։

Սակայն թէ Պարսկաստանը, թէ Թիւրքաց-Հայաստանը և թէ նոյն իսկ Կովկասը ժողովրդին չեն տալիս միջոց դիւրութեամբ օգուտ քաղելու իր ստացուածքից. երկրագործը ստիպված է մինչև օրս իր նահապետական եղանակով մշակել իր կալուածները. նա պէտք է պահի, կերակրի քանի մի զոյգ եղ և գոմէշ, որպէս զի դրանց և նահապետական գութանի կամ չութի միջնորդութեամբ վարի իր կալուածները՝ վարելահողերը, որ երբեմն, եթէ կալուածքը մեծ է, շաբաթներ ու ամիսներ է քաշում. պէտք է ցանի, տուփանի, ջրի նոյն նահապետական եղանակներով։ Գալիս է հնձի ժամանակը. այդ ահագին տարածութեամբ արաերը հնձելը մի կամ մի քանի հոգու բան չէ, կարեորութիւն է զգացվում մի քանի տասնեակ մշակների. երկրագործը պէտք է այդ բազմութիւնը իր հաշիւով կերակրի և տայ բաւական նշանաւոր գումար իրրև վարձ, այնուհետև բեռնակիր անասուններով այդ բոլորը պէտք է հաւաքել մի տեղ դիզել և ապա կալսել, որ առնուազ 2 շաբաթից մի ամիս ու կէս տեւում է, գործիքների նահապետականութեան պատճառաւ. վերջապէս զանազան նահապետական ծանր, եղանակներով, որոնց մի առ մի թուելը ձանձրացուցիչ կը լինէր, ստացվում է երկրագործական արդիւնաբերութիւնը և ինչ. այս բոլոր տաժանելի աշխատանքից յետոյ նա ստիպված է կամ իր չտեմարաններում մթերելով փտեցնել այդ արիւնքրտինքով ձեռք բերած արդիւնքը և կամ վաճառել շատ չնչին գնով.... որովհետև գիւղացին միջոց չունի իր արդիւնաբերութիւնը դուրս տանելու և պատշաճաւոր գնով վաճառելու։

Այս բոլորից վերջը երկրագործը պէտք է ընկնի պարտքի տակ... էլ ինչպէս նա երկրագործութիւն անի, երբ չահի տեղ վնասվում է, նա ակամայ պէտք է բեռնակիր դառնայ....

Ահա ինչ պատճառներից ստիպված այդ երկրագործ բազմութիւնը իր ազնիւ պարապմունքը թողած՝ դիմում է քաղաքները։ Ինչպէս չը համաձայնել այստեղ «Մշակի» խմբագրի և պ. Նիկողոսեանի հետ.... ով մտածեց արդեօք թեթեւացնել երկրագործ դասի այս սարսափելի դրութիւնը, ով մտածեց նահապետական գործիքների տեղ նոր, աւելի կատարելագործված գործիքների հետ ծանօթացնել երկրագործ դասը... ոչ ոք։ Մեր մէջ անդադար կազմվում են զանազան ընկերութիւններ «լոյս» տարածելու, բայց ոչ երբէք մի ընկերութիւն, որ ժողովրդի երկրագործ դասին դիւրութիւն տար նրա աշխատանքի եղանակի մէջ, ձրի կամ արժան գնով բաժանէր նրան երկրագործական նոր կատարելագործված գործիքներ, որ սովորեցնէր նրան երկիրը արդիւնաբերելու նոր, դիւրին ու կատարելագործված եղանակներ։

Նահապետական պարզ երկրագործը, գլխաւորապէս նրա մատաղ սերունդը 15—30 տարեկան հասակի, գնալով քաղաք, գործ ունենալով նրա բարոյապէս փչացած շրջանների հետ, ինքն էլ, բոլորովին մոռանում է իր նահապետական պարզութիւնը, իր անցեալը, ու ենթարկվում է քաղաքի վատ, անբարոյական կեանքին ու ապականվում է բարոյապէս։

Այնուհետև շարունակելով իր բեռնակրութիւնը, եթէ յաջողվէր նրան կենդանի մնալ, նա քանի մի տարուց յետոյ դառնում է իր հայրենիքը, թաթախված անբարոյականութեան մէջ, Երևակայեցէք, թէ ինչ ազդեցութիւն պէտք է ունենայ նա այնուհետև դեռ նահապետական պարզութեան մէջ մնացած գիւղական հասարակութեան վրա.... Նրան անկարելի է այնուհետև ապրել իրեն շրջապատող տարրի մէջ, նա ստիպված է կրկին դիմել Թիֆլիս կամ մի այլ կենտրոն, որովհետև այդտեղի տնբարոյական կեանքը ձգում, քարշում է նրան դէպի ինքը. նրան այնուհետև անտանելի է մնալ գիւղում, ուր ոչինչ չէ համապատասխանում նրան. նա սովորել է քաղաքային անբարոյական կեանքին... թէ ինչ հետեւանքներ ունի այս, ընթերցողին ենք թողնում մտածել։

Էմմանուէլ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Սերբիայի ներկայացուցիչը բանակցութիւններ է սկսել գերմանական կառավարութեան հետ առևտրական դաշնագրի մասին։ Իշխան Բիսմարկի առաջարկու-

---

գիրը, որ կազմել էր մէլիք Փարսադանի հետ։ Նա թողեց այն կարգադրութիւնը, որով մտածում էր՝ սկզբում թեթև յարձակում գործել, յետոյ փախուստ ձեւացնել, և թշնամուն հրապուրելով, իր բարձրութիւնից ցած իջեցնել։ Այդ բաւական կը զրաղեցնէր նրան։ Իշխանը սիրում էր գործի մէջ տեսնել շուտափոյթ վախճան։ Նա նկատեց, որ լեռան զառիվերը մագլցելը հետզհետէ դժուարելանելի էր դառնում. եթէ երկար շարունակվէր, զինուորները բոլորովին ուժաթափ կը լինէին յոգնածութիւնից։ Միւս կողմից, տեսնում էր, որ բլուրների կողքերով ուղղակի գնալով, կարելի էր մի պտոյտ գործել և անցնել կիրճի միւս կողմը։ Շրջապատող մառախուղը հնար կը տար այդ պտոյտը բոլորովին աննկատելի կերպով կատարելու։ Անցնելով կիրճի միւս կողմը, նա կը վաստակէր երկու յաջողութիւններ, առաջինը, հայոց զինուորները ազատ կը մնային կիրճի մէջ մրտնելուց և Թուրքերի գնտակակոծութեանը ենթարկվելուց, երկրորդ, նա թշնամուն կը թողնէր իր ետեւում, երկու կրակի մէջ,— իրա և մէլիք Փարսադանի զօրքերի մէջ տեղում։

Նա կանչեց իր մօտ Երևանցի մէկ ոտքից կաղ Օհանէսին, որ իր թիկնապահների թուումն էր գտնվում և յայտնի էր իր ճարպիկութիւններով։

—Տօ, կաղ սատանայ, մօտ եկ, ասաց նրան, հարցնելով.—դու իմանում ես, եթէ այդ ուղղութեամբ առաջ գնալու լինենք, որտեղ կը դուրս գանք։

Նա ձեռքով ցոյց տուեց ուղղութիւնը։

—Իմանում եմ, ուղիղ կը դուրս գանք կիրճի միւս կողմը, առանց նրա մէջ մտնելու, պատասխանեց կաղ թիկնապահը։— Բայց դրա համար պէտք է ահագին պտոյտ գործել։

—Իրաւ է, բայց այդ ահագին պտոյտը մեզ կազատէ ժայռերի կուրծքը ճանկռտելուց և քարափների գլխից ցած գլորվելուց, որով շատ հեշտ կարելի է վիզը կոտրել։

—Կարելի է, պատասխանեց կաղը, հաւանութիւն տալով։

—Այդ էլ կարելի է, որ մենք անցնելով կիրճի միւս կողմը, թշնամուն կը բռնենք երկու կրակի մէջ։

—Կարելի է, եթէ նրանք մեր շարժումը չը նկատեն։

—Ուզում ես ասել, մեր առաջը կը կտրեն, կաշխատեն մեր ընթացքը արգելել.—այդ աւելի լաւ, մենք էլ հէնց այդ ենք ցանկանում, որ նրանք ցած իջնեն իրանց բարձրութիւններից։ Բայց ես կարող եմ տասն և երկու առաքելների և երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետների անունով քեզ հաւատացնել, որ նրանք չեն տեսնի մեր շարժումը։ Ցեսնում ես մառախուղը, այժմ աւելի ու աւելի մռայլ գոյն է ստանում։

Թիկնապահը նայեց իր շուրջը, և իրաւ, սպիտակ մառախուղը այժմ սկսել էր մոխրագոյն ամպերի կերպարանք ստանալ։

—Այդ բոլորը գիտես թէ ինչու համար քեզ հետ խօսեցի, յառաջ տարաւ իշխանը.—որ քեզ հասկացնեմ իմ դիտաւորութիւնը։ Ես ահա այդ ուղղութեամբ պէտք է առաջ գնամ։ Իսկոյն կը վազես մէլիք Փարսադանի մօտ, կը յայտնես իմ միտքը։ Հասկացար։

—Հասկացայ... պատասխանեց կաղը և պատրաստվեցաւ ճանապարհ ընկնելու։

—Դէ, իմ քաջ, շուտով, խրախուսեց նրան իշխանը.—դու քո կաղ ոտքով դարձեալ իմ թիկնապահների մէջ ամենից աւելի արագավազն ես։ Իմ կողմից կը յայտնես մէլիքին, որ իր տեղում անշարժ մնայ, մի քանի ժամից յետոյ թշնամին իմ ու նրա մէջտեղում կը լինի. այն ժամանակ պէտք է խեղդել երկու կողմից։

Կաղ թիկնապահը սատանայի նման անհետացաւ։

Իշխանը իր ձեռքի տակ գտնված խումբից չորս հարիւր հոգի իր հետ վեր առնելով, դիմեց դէպի ընտրած ուղղութիւնը, իսկ հարիւր հոգի թողեց առաջվայ տեղում, որ հզաղեցնեն թշնամուն, շարունակելով հրացանաձգութիւնը, որպէս զի կարծել տան, թէ ամբողջ զօրքը այնտեղ է գտնվում։

Իշխանի ընտրած ուղղութեամբ, որպէս կարծում էր նա, այնքան հեշտ չէր անցնել։ Պէտք էր իջնել ահագին վիհերի մէջ, յետոյ վեր բարձրանալ, կրկին իջնել, կրկին բարձրանալ, և այսպէս սարսափելի ելեւէջներով շարունակվում էր ճանապարհը, որտեղից վայրենի այծերը միայն կարող էին անցնել։

Ինքնդհատ անձրևները, սրնթաց հեղեղատները կտրատել էին լեռների կուրծքը և ամեն տեղ բաց էին արել խորին, ահռելի անդունդներ, որ ծածկված էին փչոտ թփերով և ճոխ մացառներով։ Խիտ պատատուկները հիւսել էին միմեանց հետ այդ հարուստ, վայրենի բուսականութիւնը, որի միջով օձերը միայն կարող էին սողալ։ Բայց հայ զինուորը, իր լեռների հարազատ որդին, անցնում էր այնտեղից։ Դիժուարութիւնները աւելի զրգռում էին, աւելի բորբոքում էին նրա գորովն ու ոգեորութիւնը։ Հայրենասիրութիւնը, հայրենիքի ազատութեան գաղափարը նրա մէջ հասած էր վերին աստիճանի անձնազոհութեան։ Այսօր պէտք էր տիրել մի բերդի, որ երկրի ամենանշանաւոր ամրութիւններից մէկն էր. պէտք էր կամ մեռնել, կամ տիրել,— այդ էր իւրաքանչիւրի ուխտը։

Մինչ Բայինդուր իշխանը իր խմբով դանդաղ, բայց եռանդոտ կերպով առաջ էր գնում, այդ միջոցին մէլիք Փարսադանը լեռան միւս կողմում բոլորովին այլ ձեռնարկութեան վրա էր մտածում։ Նրա տարիքը անցել էին վաթսունից։ Ծերունի զօրապետի մազերը ճերմակել էին անընդհատ կռիւների և արիւնհեղութեան մէջ։ Հոգով նա մի հմուտ և փորձված զինուոր էր, իսկ խելքով երկրի լաւ կառավարիչ։ Հալածարը իր շրջակայ գիւղօրայքով պատկանում էր նրան։

Նրա և Թուրք զինուորների մէջ շարունակվում էին թեթև հրացանաձգութիւններ։ Ոչ մի կողմը չէր կամենում վճռական քայլ անել և յարձակում գործել։ Հրացանները արձակվում էին աւելի ցոյցի համար, կարծես, մինը միւսին ասել էր ուզում. «տես, ես այստեղ եմ»...

Մառախուղը այժմ բոլորովին կորցրել էր իր ճերմակութիւնը և մոխրի գոյն էր ստացել։ Ցանկարծ բարձրացաւ թեթև, բայց սառն քամի. սկսեց մանր կերպով անձրևել։ Այդ երևոյթը, որ կռիւի ժամանակ կարող էր ուրիշներին տաճութիւն պատճառել, ազդեց ծերունի զօրապետի մէջ մի ներքին ուրախութիւն։ Նրա դէմքի կնճիռները ցնցվեցան և ժպիտի նման մի բան փայլեց խորին աչքերի մէջ։ Այդ միջոցին յայտնվեցաւ կաղ Օհանէսը և հաղորդեց նրան Բայինդուր իշխանի պատուէրները։

—Կռիւի ժամանակ այսպիսի հաստատ և անփոփոխ որոշումները շատ անգամ կարող են մեծապակար հետեւանք ունենալ, պատասխանեց նա իր սովորական հանդարտութեամբ,—Պէտք է յարմարվել հանգամանքների և պայմանների փոփոխութեան հետ։ Նա հրամայում է մնալ իմ տեղում անշարժ մնալ, բայց դուք ինչ կասէք այդ անձրևին։

—Անձրևին ես ոչինչ ասել չեմ կարող, պատասխանեց կաղ պատգամաբերը ծիծաղելով.—նա իր քէֆը ուզածի չափ, որքան կամենայ, այնքան էլ կը գայ։

—Այո՛, որքան կամենայ, այնքան կը գայ, ասաց ծերունի զօրապետը նոյնպէս ծիծաղելով։—Բայց ես այդ մթին ամպերից գուշակում եմ, որ երկար կը գայ։ Մանր անձրևները մեր երկրում շուտով չեն դադարում։ Եւ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը...

—Այսինքն, շուտով ամենքս թրջված հաւ կը դառնանք...

—Ես կրկնում եմ, որ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը։ Այդ կարելի է վճռված բան համարել։ Դու գիտես, որ Թուրքերը զինված են այնպիսի հրացաններով, որ վառվում են փիլթաներով (ֆիտիլ)։ Անձրևը անպատճառ կը թրջէ փիլթաները և ոչ մի հրացան արձակել չեն կարող։ Իսկ մեր մարդիկը ունեն գեղեցիկ կայծհանաւոր հրացաններ, որ անձրևից շատ չեն վախենում։ Այժմ կարելի է համարձակ յարձակում գործել և մի քանի ժամից յետոյ բոլոր Թուրքերին իրանց բարձրութիւններից կը թափենք ձորի մէջ։

(Կը շարունակվի)

ԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 1 յունիսի

Մեր հասարակութեան ցածր դասով հետաքրքրվող չը կայ, նրա կեանքը, ներքին կազմակերպութիւնը, տնտեսական դրութիւնը, մի խօսքով նրա բիւրաւոր ցաւերը քննող, դարմանելու կարեւոր միջոցները ցոյց տուող չը կայ։ Ամենքը խորշում են նրանից, մոռանալով որ հասարակական կեանքում գործողների մեծամասնութիւնը այդ տգէտ և բարոյապէս ու նիւթապէս խեղճ ու աղքատ դասի արտադրութիւնն է... Հէնց այս է պատճառը, որ մենք հրաւիրում ենք մեր լրագիրների պատուելի թղթակիցներին, փոխանակ մանր մունր վէճերի, անձնական նեղ ու սահմանափակ հաշիւների ետեից ընկնելու, սրան նրան պախարակելու, սրան նրան վարկը վայր գցելու, ծանօթանալ ստորին դասակարգի, նրա բազմադիմի պէտքերի հետ, քննել նրան և լուսաբանել նրա կեանքի մութ կողմերը տեղական մամուլի միջնորդութեամբ, միջոց տալ մամուլի և հասարակութեան ներկայացուցիչներին խորհելու, գրելու, քննելու նրանց արտայայտած մտքերի իրաւացի կամ անիրաւ լինելը և ծանօթ լինելով ժողովրդի՝ իսկապէս նրա ստորին դասակարգի ցաւերի և վէրքերի հետ, ըստ այնմ գործել և դարման տանել նրան։

Այս անգամ մենք վերցնում ենք այդ դասակարգի մի որոշեալ շրջանը,—մշակները։

Ոչ ոք մեղանում, մինչև հիմայ, չէ հետաքրքրվել հասարակութեան այս դասով, որ իր քանակութեամբ կազմում է նրա մի պատկառելի մասը։ Ոչ մէկը մեր լրագիրներից ուշադրութեան չէ արժանացրել այս դասակարգը, ոչ մէկը չէ հետաքրքրվել նրանով, կարծես նա հասարակութեան խորթ անդամը լինէր....

Իւրաքանչիւր տարի հարիւրաւոր խմբերով քանի մի հազար հոգի այդ թշուառ արարածներից, ոչինչի տեղ չը դնելով երկար ճանապարհի անտանելի նեղութիւնները, խռնվում են Թիֆ-

---

գիրը, որ կազմել էր մէլիք Փարսադանի հետ։ Նա թողեց այն կարգադրութիւնը, որով մտածում էր՝ սկզբում թեթև յարձակում գործել, յետոյ փախուստ ձեւացնել, և թշնամուն հրապուրելով, իր բարձրութիւնից ցած իջեցնել։ Այդ բաւական կը զրաղեցնէր նրան։ Իշխանը սիրում էր գործի մէջ տեսնել շուտափոյթ վախճան։ Նա նկատեց, որ լեռան զառիվերը մագլցելը հետզհետէ դժուարելանելի էր դառնում. եթէ երկար շարունակվէր, զինուորները բոլորովին ուժաթափ կը լինէին յոգնածութիւնից։ Միւս կողմից, տեսնում էր, որ բլուրների կողքերով ուղղակի գնալով, կարելի էր մի պտոյտ գործել և անցնել կիրճի միւս կողմը։ Շրջապատող մառախուղը հնար կը տար այդ պտոյտը բոլորովին աննկատելի կերպով կատարելու։ Անցնելով կիրճի միւս կողմը, նա կը վաստակէր երկու յաջողութիւններ, առաջինը, հայոց զինուորները ազատ կը մնային կիրճի մէջ մրտնելուց և Թուրքերի գնտակակոծութեանը ենթարկվելուց, երկրորդ, նա թշնամուն կը թողնէր իր ետեւում, երկու կրակի մէջ,— իրա և մէլիք Փարսադանի զօրքերի մէջ տեղում։

Նա կանչեց իր մօտ Երևանցի մէկ ոտքից կաղ Օհանէսին, որ իր թիկնապահների թուումն էր գտնվում և յայտնի էր իր ճարպիկութիւններով։

—Տօ, կաղ սատանայ, մօտ եկ, ասաց նրան, հարցնելով.—դու իմանում ես, եթէ այդ ուղղութեամբ առաջ գնալու լինենք, որտեղ կը դուրս գանք։

Նա ձեռքով ցոյց տուեց ուղղութիւնը։

—Իմանում եմ, ուղիղ կը դուրս գանք կիրճի միւս կողմը, առանց նրա մէջ մտնելու, պատասխանեց կաղ թիկնապահը։— Բայց դրա համար պէտք է ահագին պտոյտ գործել։

—Իրաւ է, բայց այդ ահագին պտոյտը մեզ կազատէ ժայռերի կուրծքը ճանկռտելուց և քարափների գլխից ցած գլորվելուց, որով շատ հեշտ կարելի է վիզը կոտրել։

—Կարելի է, պատասխանեց կաղը, հաւանութիւն տալով։

—Այդ էլ կարելի է, որ մենք անցնելով կիրճի միւս կողմը, թշնամուն կը բռնենք երկու կրակի մէջ։

—Կարելի է, եթէ նրանք մեր շարժումը չը նկատեն։

—Ուզում ես ասել, մեր առաջը կը կտրեն, կաշխատեն մեր ընթացքը արգելել.—այդ աւելի լաւ, մենք էլ հէնց այդ ենք ցանկանում, որ նրանք ցած իջնեն իրանց բարձրութիւններից։ Բայց ես կարող եմ տասն և երկու առաքեալների և երեք հարիւր վաթսուն ու վեց հայրապետների անունով քեզ հաւատացնել, որ նրանք չեն տեսնի մեր շարժումը։ Ցեսնում ես մառախուղը, այժմ աւելի ու աւելի մռայլ գոյն է ստանում։

Թիկնապահը նայեց իր շուրջը, և իրաւ, սպիտակ մառախուղը այժմ սկսել էր մոխրագոյն ամպերի կերպարանք ստանալ։

—Այդ բոլորը գիտես թէ ինչու համար քեզ հետ խօսեցի, յառաջ տարաւ իշխանը.—որ քեզ հասկացնեմ իմ դիտաւորութիւնը։ Ես ահա այդ ուղղութեամբ պէտք է առաջ գնամ։ Իսկոյն կը վազես մէլիք Փարսադանի մօտ, կը յայտնես իմ միտքը։ Հասկացար։

—Հասկացայ... պատասխանեց կաղը և պատրաստվեցաւ ճանապարհ ընկնելու։

—Դէ, իմ քաջ, շուտով, խրախուսեց նրան իշխանը.—դու քո կաղ ոտքով դարձեալ իմ թիկնապահների մէջ ամենից աւելի արագավազն ես։ Իմ կողմից կը յայտնես մէլիքին, որ իր տեղում անշարժ մնայ, մի քանի ժամից յետոյ թշնամին իմ ու նրա մէջտեղում կը լինի. այն ժամանակ պէտք է խեղդել երկու կողմից։

Կաղ թիկնապահը սատանայի նման անհետացաւ։

Իշխանը իր ձեռքի տակ գտնված խումբից չորս հարիւր հոգի իր հետ վեր առնելով, դիմեց դէպի ընտրած ուղղութիւնը, իսկ հարիւր հոգի թողեց առաջվայ տեղում, որ հզաղեցնեն թշնամուն, շարունակելով հրացանաձգութիւնը, որպէս զի կարծել տան, թէ ամբողջ զօրքը այնտեղ է գտնվում։

Իշխանի ընտրած ուղղութեամբ, որպէս կարծում էր նա, այնքան հեշտ չէր անցնել։ Պէտք էր իջնել ահագին վիհերի մէջ, յետոյ վեր բարձրանալ, կրկին իջնել, կրկին բարձրանալ, և այսպէս սարսափելի ելեւէջներով շարունակվում էր ճանապարհը, որտեղից վայրենի այծերը միայն կարող էին անցնել։

Ինքնդհատ անձրևները, սրնթաց հեղեղատները կտրատել էին լեռների կուրծքը և ամեն տեղ բաց էին արել խորին, ահռելի անդունդներ, որ ծածկված էին փչոտ թփերով և ճոխ մացառներով։ Խիտ պատատուկները հիւսել էին միմեանց հետ այդ հարուստ, վայրենի բուսականութիւնը, որի միջով օձերը միայն կարող էին սողալ։ Բայց հայ զինուորը, իր լեռների հարազատ որդին, անցնում էր այնտեղից։ Դիժուարութիւնները աւելի զրգռում էին, աւելի բորբոքում էին նրա գորովն ու ոգեորութիւնը։ Հայրենասիրութիւնը, հայրենիքի ազատութեան գաղափարը նրա մէջ հասած էր վերին աստիճանի անձնազոհութեան։ Այսօր պէտք էր տիրել մի բերդի, որ երկրի ամենանշանաւոր ամրութիւններից մէկն էր. պէտք էր կամ մեռնել, կամ տիրել,— այդ էր իւրաքանչիւրի ուխտը։

Մինչ Բայինդուր իշխանը իր խմբով դանդաղ, բայց եռանդոտ կերպով առաջ էր գնում, այդ միջոցին մէլիք Փարսադանը լեռան միւս կողմում բոլորովին այլ ձեռնարկութեան վրա էր մտածում։ Նրա տարիքը անցել էին վաթսունից։ Ծերունի զօրապետի մազերը ճերմակել էին անընդհատ կռիւների և արիւնհեղութեան մէջ։ Հոգով նա մի հմուտ և փորձված զինուոր էր, իսկ խելքով երկրի լաւ կառավարիչ։ Հալածարը իր շրջակայ գիւղօրայքով պատկանում էր նրան։

Նրա և Թուրք զինուորների մէջ շարունակվում էին թեթև հրացանաձգութիւններ։ Ոչ մի կողմը չէր կամենում վճռական քայլ անել և յարձակում գործել։ Հրացանները արձակվում էին աւելի ցոյցի համար, կարծես, մինը միւսին ասել էր ուզում. «տես, ես այստեղ եմ»...

Մառախուղը այժմ բոլորովին կորցրել էր իր ճերմակութիւնը և մոխրի գոյն էր ստացել։ Ցանկարծ բարձրացաւ թեթև, բայց սառն քամի. սկսեց մանր կերպով անձրևել։ Այդ երևոյթը, որ կռիւի ժամանակ կարող էր ուրիշներին տաճութիւն պատճառել, ազդեց ծերունի զօրապետի մէջ մի ներքին ուրախութիւն։ Նրա դէմքի կնճիռները ցնցվեցան և ժպիտի նման մի բան փայլեց խորին աչքերի մէջ։ Այդ միջոցին յայտնվեցաւ կաղ Օհանէսը և հաղորդեց նրան Բայինդուր իշխանի պատուէրները։

—Կռիւի ժամանակ այսպիսի հաստատ և անփոփոխ որոշումները շատ անգամ կարող են մեծապակար հետեւանք ունենալ, պատասխանեց նա իր սովորական հանդարտութեամբ,—Պէտք է յարմարվել հանգամանքների և պայմանների փոփոխութեան հետ։ Նա հրամայում է մնալ իմ տեղում անշարժ մնալ, բայց դուք ինչ կասէք այդ անձրևին։

—Անձրևին ես ոչինչ ասել չեմ կարող, պատասխանեց կաղ պատգամաբերը ծիծաղելով.—նա իր քէֆը ուզածի չափ, որքան կամենայ, այնքան էլ կը գայ։

—Այո՛, որքան կամենայ, այնքան կը գայ, ասաց ծերունի զօրապետը նոյնպէս ծիծաղելով։—Բայց ես այդ մթին ամպերից գուշակում եմ, որ երկար կը գայ։ Մանր անձրևները մեր երկրում շուտով չեն դադարում։ Եւ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը...

—Այսինքն, շուտով ամենքս թրջված հաւ կը դառնանք...

—Ես կրկնում եմ, որ այդ անձրևի հետ կապված է մեր յաջողութիւնը։ Այդ կարելի է վճռված բան համարել։ Դու գիտես, որ Թուրքերը զինված են այնպիսի հրացաններով, որ վառվում են փիլթաներով (ֆիտիլ)։ Անձրևը անպատճառ կը թրջէ փիլթաները և ոչ մի հրացան արձակել չեն կարող։ Իսկ մեր մարդիկը ունեն գեղեցիկ կայծհանաւոր հրացաններ, որ անձրևից շատ չեն վախենում։ Այժմ կարելի է համարձակ յարձակում գործել և մի քանի ժամից յետոյ բոլոր Թուրքերին իրանց բարձրութիւններից կը թափենք ձորի մէջ։

(Կը շարունակվի)

թեամբ միացնալ խորհուրդը վճռել է նորից ներկայացնել բայխստագին 1877 թուականի առևտրական դաշնագիրը Գերմանիայի և Ռումինիայի մէջ։ Դաշնագիրը բաղկացած է 25 յօդուածներից։ Նա կապված է 10 տարի ժամանակով և, եթէ այդ ժամանակամիջոցի ընթացքում չը փոփոխվի, դարձեալ մի տարի ոյժ կունենայ։ Նա վաղուց հաստատված է ռումինական օրէնսդրական ժողովից, բայց դեռ չէ ներկայացրած գերմանական բայխստագին և այդ պատճառով նշանակութիւն չունի։

Յունիսի 12-ին Վիլհելմ կայսրը հասաւ Էմս, որտեղ նրան դիմաւորեցին շվեդական թագաւորը և տեղական իշխանութիւնը։ Կայսրի ընդունելութեան համար քաղաքը շատ գեղեցիկ զարդարված էր։

Շուտով կը դադարեն պարլամենտի նիստերը Բերլինի մէջ։ Այժմեան պարլամենտը ամենքին ձանձրացրեց, այնպէս որ նրա նիստերին շատ քիչ այցելուներ էին գնում։ Երբ հարկաւոր էր լինում քուէարկել որ և է հարց, պարլամենտի անդամները բացակայ էին գտնվում, իսկ մնացածները չէին կարողանում որ և է վճիռ կայացնել։ Այդ իրողութիւնը շատ էր վնասում ընթացիկ գործերի կարգադրութեանը։

Իշխան Բիսմարկ, տեսնելով, որ այժմեան պարլամենտը չէ հաստատում իր առաջարկած միջոցները, կամ ամբողջապէս նրանց մերժում է, կամ ազաւազում, նրանից շատ անբաւական է և կամենում է, որ պարլամենտի անդամները նրա հնազանդ կուսակիցները ընտրվեն։

Պարլամենտի ապագայ անդամների ընտրութիւնները կատարելապէս գրաւել են գերմանական քաղաքական շրջանների ուշադրութիւնը։ Բացի պարլամենտական կուսակցութիւններից, կառավարութեան անդամները և մինիստրները ցանկութիւն են յայտնում ընտրվել, գովելով կառավարչական քաղաքականութեան բարիքները։ Այդ ձևով էր խօսում Ֆինանսների մինիստրը, որ նկատեց, թէ իշխան Բիսմարկի Ֆինանսական վերանորոգութիւնները ապահովում են երկրի Ֆինանսների դրութիւնը։

Ընտրութիւնների հետևանքները դժուար է նախագուշակել։ Կան մի քանի տեղեր, ինչպէս Էլզաս և Լոտարինգիա, որտեղ կառավարչական կանդիդատները չեն կարող ընտրված լինել։ Էլզասի և Լոտարինգիայի բնակիչները ներկայումս այնպէս են բողոքում գերմանական քաղաքականութեան և տիրապետութեան դէմ, որքան տաս տարի առաջ, երբ այդ նահանգները խլվեցան Ֆրանսիայից և միացվեցան Գերմանիայի հետ։

ԱՆԳԼԻԱ

Նորերումս անգլիական լրագիրները հրատարակեցին Իրլանդիայի մէջ մայիս ամսվայ ընթացքում պատահած կալուածական յանցանքների վիճակագրական տեղեկութիւնները։ Մայիսին 337 կալուածական յանցանք է պատահել, ապրիլին 295, մարտին 146, իսկ անցեալ տարվայ դեկտեմբերին 869։ Իսկապէս այս վերջին թուանշանը կարող է մեծանալ, եթէ գործերի այժմեան դրութիւնը կը շարունակվի։ Անկարգութիւնները ամեն տեղ տարածվում են։ Կօրկի կոմսութեան մէջ պոլիցիան մի մարդ կալանաւորեց, որ անկարգութիւն էր գործում։ Այնտեղ հաւաքված ամբոխը շրջապատեց պոլիցիային և, քարեր խփելով ու փայտերի հարուածներով նրան հեռացրեց։ Քարերը կարկուտի նման էին թափվում։ Պոլիցիականները մերկացրին սուրները և երկու կողմից էլ շատ մարդ վիրաւորվեցաւ։

Մինչև անգամ երբ պոլիցիականները գընացին իրանց զօրանոցները, այնտեղ էլ չը կարողացան հանգիստ ճաշել, որովհետև բոլոր ժամանակ պատուհանների վրա քարեր էին գցում։ Պոլիցիականներից ոչ մէկը անվնաս չը մնաց։ Այդ անկարգութիւնները Կօրկի կոմսութեան մէջ բոլորովին անսպասելի կերպով պատահեցան։

Ցիպերարիի մէջ ամբոխը այնպիսի ցոյցեր արաւ ի պատիւ Կրօկ եպիսկոպոսի, որ կալուածական միութիւնը դեռ երբէք չէ արել։ Ամբողջ քաղաքը զարդարված էր դրօշակներով, ծաղիկներով և կանաչով։ Երկաթուղու կայարանի մօտ Նրան ընդունեցին երաժիշտներով և այնտեղից տարան մինչև եկեղեցին, որի մօտ պատուած եպիսկոպոսի համար ամբիոն էր շինված։ Այդ ամբիոնից նա մի ճառ արտասանեց, որ ոգևորութեամբ ընդունվեցաւ 4,000 մարդուց բաղկացած ամբոխից։ Ճառի սիրգը շատ յարձակողական էր։ Այնուհետև եպիսկոպոսը յիշեց այն ծառայութիւնները, որ իրլանդական ժողովուրդը մի ժամանակ արել է եւրոպական քաղաքականութեանը, իսկ ինքը հալածվել է առաջ անգութ դանիացիներից, իսկ յետոյ անգլօսակսերից։ Զը նայելով այդ հալածանքներին, իրլանդացիները մինչև այժմ ուժեղ, անյաղթ և անզուսպ ժողովուրդ են մնացել։ Կրօկ առաջարկեց իրլանդացիներին հաստատ կազմակերպութիւն և լուսաւորութիւն, իբրև ամենալաւ զէնք ընդդիմադրութեան համար և զգուշացրեց ամբոխին անմիտ գործերից։ Եպիսկոպոսը իրլանդացիների առաջնորդներ է համարում „անմահ“ Պարնելին և համայնքների ժողովի առաջադէմ կուսակցութեան անդամներին, որոնց նա խորհուրդ տուեց ընդունել կալուածական օրինագիծը, եթէ ժողովը նրան խմբագրէ։ Ինչքան էլ այդ օրինագիծը թերի լինի, այնուամենայնիւ իրլանդացիների համար դա մեծ առաջադիմութիւն է։ Կալուածական օրէնքի ընդունվելուց յետոյ միութեան գործունէութիւնը աւելի մեղմ կը լինի։ Այնուհետև եպիսկոպոսը խորհուրդ տուեց իրլանդացիներին չընդդիմանալ զօրքերին և չը միջամտել ֆերմերներին արտաքսելու ժամանակ։ Իրլանդացիները պէտք է դիմեն Ամերիկայի և եւրոպայի հասարակական կարծիքի օգնութեանը և ատեն գործերի այժմեան դրութիւնը, որ անտանելի է։ Եպիսկոպոսը նկատեց, որ նա չէ ցաւակցում այն ֆերմերներին, որոնք միջոց ունեն կալուածական վարձը վճարելու համար և չեն վճարում, այլ խղճում է նրանց, որոնք վճարելու միջոց չունեն և այնուամենայնիւ նրանց արտաքսում են։ „Անգլիան, որ ազատութեան օրօրոցն էր համարվում, ասաց նա վերջը, վիրաւորում և անպատուում է ազատութեանը ներկայումս գործադրած միջոցներով։“

Իրլանդական երդվեալ դատաւորները չեն բաւականանում իրլանդացի ֆերմերներին արդարացնելով, այլ մեղադրում են պոլիցիականներին անկարգութիւնների պատճառ դառնալու համար։ Մի պոլիցիական պատժի ենթարկվեցաւ նախատեսված սպանութեան համար, որովհետև անկարգութիւնների ժամանակ նա մահացու կերպով վիրաւորել էր մի ֆերմերի։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 3 յունիս 81

Երկու երեք օրէ ի վեր բաւական մտատանջութիւն. Վագթ կը հաղորդէր թէ կառավարութեան ընդունած հեռագրին համեմատ 34 գիւղեր Վանայ լճին արևելեան կողմը կործաներ են մեծ երկրաշարժէ մը։ Բայց ոչ պատրիարքարանը, ոչ Միացեալ ընկերութիւնք տեղեկութիւն չէին առած. Կ. Պոլսէն քաշուած հեռագիրներուն պատասխան չը կար և դեռ չը կայ. կը կարծէինք թէ Թեղուտի երկրաշարժն է որ թիւրք թերթը կը շփոթէ այժմ Վանայ հետ։ Հիմայ Stamboul սուտ կը հանէ Վագթի լուրը. երկիւղով մը ապատեցանք։—

Այս առաւօտ Կ. Պոլիս հասաւ Անգղիոյ նոր դեսպան լորդ Տըֆրէն։ Կրսուի թէ յունական հարցը վաղը վերջնական կերպով կը լմննայ, և կարգը կուգայ մեր հարցին։— Ինքզինքնիս չենք կրնար խաբել, մեր խնդրոյն շուտով լուծում գտնելուն չենք սպասեր. ինչպէս ուրիշ ատեն ալ ըսած ենք, կառավարութիւնը պատրաստ է ամեն միջոցներու դիմել որպէս զի Հայաստանի մէջ եւրոպական տէրութեանց միջամտութեամբ բարեկարգութիւնք գործադրելու վտանգին առջևը առնէ։ Դուռը ունի իրեն յատուկ ծրագիրներն բարենորոգմանց համար. այդ ծրագիրներուն երևոյթն ինչ որ ալ ըլլայ, միշտ այնպէս չինուած են որ ուրիշ ձևի մը տակ շարունակեն այն քաղաքականութիւնը զոր յարատևութեամբ այսքան ատեն է ի գործ կը դնեն ի Հայաստան և ի Կիլիկիա։—Թիւրք թերթերը սկսած են նախերգանքը. Հագիքաթ անցեալ օր Իրլանդայի վիճակը նկատողութեան կառնէր, շատ անտանելի կը գտնէր զայն և կը հետևցնէր թէ «երբ Մեծն Բրիտանիա իր երկրին կարևոր մէկ մասը բարեկարգելու այնքան կարօտ է, կելլէ հայոց վիճակը բարեկարգելու խնդրովը զբաղիլ։ Միթէ հայերու վիճակը Տաճկաստանի մէջ ամենապատուական չէ.»—Ինչ կրնանք ըսել թերթի մը, որոյ խմբագիրներն կը գրեն այնպիսի բաներ, որոյ ոչ իրենք կը հաւատան, ոչ կարդացող թիւրքերը, ոչ կարդացող քրիստոնեայները։—Ահմէդ Միդհատ էֆէնդի, որ Թարթիւֆի դերը կատարելու յարմարութիւնները միշտ փորձով ցոյց կուտայ, մեր խնդրոյն մէջ վրանջատ բաց կերպով կը կեղծէ։— Իսկ Օսմանլը դիւանագիտութեան կը դիմէ. Բարիզի դաշնագրին փոշիները կը սկսի թոթվել և այդ դաշնագրին 9-դ յօդուածին վրա կոխնելով, կուգայ եւրոպայի հարցնել թէ, որ իրաւամբ պիտի միջամտեն Տաճկաստանի ներքին բարեկարգութեանց գործոյն. (Հայկական բարեկարգութիւնք ըսելէ կը զգուշանան)։ «Ցիտուն և վեցի դաշնագրի 9-րդ յօդուածը, կըսէ Օսմանլը, ոչ ջնջուած է և ոչ փոփոխված Բերլինի դաշնագրովը, ուրեմն նա զօրութիւն ունի ամբողջապէս. այդ յօդուածը միակ միջոցն է որ կերաշխաւորէ արդիւնաւոր կերպով Կայսրութեան վերածնունդը։»

Օսմանլը մելամաղձիկ կերպով կը յիշէ թէ ինչ երջանիկ օրեր անցուց Թիւրքիա այդ դաշնագրի շնորհիւ։—Անշուշտ Սուլթանի օրդանը իրաւունք ունի տրտմիլ և փնտռել անցեալ մը, յորում առանց պատասխանատուութեան կարող էին քրիստոնէից արիւնը ծծել, և ապականեալ, ծայլ բարբարոս ժողովուրդ մը կրնար մեր քրտինքովը և մեր արիւնովը մնանիլ։ Վագթ ալ ետ չը մնար և նա ալ ռէյիտական քաղաքականութիւնը առաջ կը քշէ։ Ըստ Վագթի, Բէարպուրկ պատրաստուեր է Հայաստանի բարեկարգութեանց ծրագիր մը, որոյ գործադրութիւնը պիտի պահանջէ Ռուսիա։—Վագթ կուզէ մխիթարել իւր ժողովուրդը, ցոյց տալ թէ Հայաստանի բարեկարգութիւնք անհնարին են, վասն զի Անգղիա և Ռուսիա տարբեր շահեր ունին Հայաստանի մէջ, ինչ ծրագիր որ Անգղիա իրեն օգտակար սեպէ, Ռուսիա զայն իրեն համար վնասակար կը գտնէ և փոխադարձ։— Սակայն Վագթի դժբաղդութիւնէն այս այսպէս չէ։— Իբր շատ ստոյգ կը զրուցուի թէ Անգղիա նախապէս ամեն տէրութեանց հաւանութիւնը առած է և անոնց կողմանէ գործելու լիազօր իշխանութիւն ստացած է։ Ֆրանսայի և Ռուսիոյ դեսպանները, արձակուրդ առնելով քիչ օրէն կը մեկնին Կ. Պոլսէն։

Ճիշտ երեք տարիներ են գրեթէ օրը օրին, որ Բերլինի դաշնագիրն ստորագրուեցաւ. ինչ երազներ ունեցանք նոյն օրերը. սակայն անկէց վերջը շատ դառն պատրանքներ մեզ պահված էին և տկարութիւններս համբերութիւն կարծելով կը մխիթարուէինք։ Այս երեք տարիներու մէջ կըրնայինք ուրիշ կերպ գործել, բայց շատ սխալներ ըրինք. սակայն անցեալը անցեալ է, ողբալու ատեն չէ։—Այժմ բոլոր մեր յոյսը դիւանագիտութեան վրայ է. ծրագիրներ պատրաստել, նոր նոր ձեռնարկներու յոյսերով խաբուիլ անօգուտ է։ Թշնամւոյն հետ ճակատ առ ճակատ ենք։ Ահաւասիկ խելացի կերպով շարժելու օրերնիս, գրեթէ ամեն աչքեր մեր վրայ պիտի նային, շատ թաքուն հարուածներ ալ պիտի տրուին մեզ, և ո՞ գիտէ ինչքան օտար էջեր զմեզ պախարակելու համար պիտի մրօտուին։—Մեր ամենէն մեծ խոհեմութիւնը պէտք է ըլլայ Նէրսէսի շուրջը բոլորիլ, ամեն կերպով նորա նեցուկ ըլլալ։ Նէրսէսի աղգին մատուցած ամենէն մեծ ծառայութիւններէն մին սա եղաւ, որ իր օրովը աշխարհս ամեն կողմի հայերը համերաշխութիւն մը ունեցան, մեծ միաբանութիւն մը տիրեց մէջերնիս և մեր առաջնորդին, Կ. Պոլսոյ պատրիարքը, տապալմանը հետամուտ չեղանք, երկու հաւասար բանակներու չը բաժնուեցանք։

Ինչ պիտի ըլլայ վաղուան Ազգ. ժողովը, արդեօք յետին պահուն խելքը պիտի կորսնցնէ.— Վերջին տեղեկութեանց նայելով, այս չաբաթ բաւական փոփոխութիւն եղեր է մտաց մէջ, և անոնք որ այս նստին անպատճառ պատրիարքը հրաժարեցնելու պիտի աշխատէին, կըսուի թէ իրենց դիտաւորութիւնէն ետ պիտի կենան, հասարակաց կարծիքէն վախնալով։ Երանի թէ չիտակ ըլլար այս լուրը։

Երեսփոխանական վերջին ընտրութիւններ եղան, բաւական խելքերնին գլուխնին խոհեմ մարդեր ընտրուեցան։—Այս նստին պիտի ընտրուի ժողովքին նախագահը, որ տարուան մը համար պաշտօն կունենայ։ Ապահովապէս նախագահը Բ. Դրան էֆէնդիներէն ոչ ոք պիտի ըլլայ, Մերիէմ-Գուլի պ. Յարութիւնի ընտրութիւնը գրեթէ ապահովուած է։

Նամակս այս երեկոյէն փակելու ստիպեալ եմ, վաղուան եղածները շաբաթ աւուր թղթատարով։

Քանի որ Հայկական խնդիրն օրակարգն է, ալ քիչ մը յաճախ նամակ պիտի գրենք, մանաւանդ որ այս տեղի հայ ու եւրոպացի թերթերն հրահանգ պիտի ընդունին լռել այս խնդրոյն վրայ։

Այս վայրկենին կը լսեմք թէ Հաճըն (Կիլիկիոյ մէջ) բաւական ծանր դէպքեր տեղի ունեցեր են հայոց և թրքաց մէջ։ Հոս տեղի հաճընցոց մէջ շատ իրարանցում։—Մանրամասնութիւնք յաջորդով։

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յունիսի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ հրատարակված է բարձրագոյն հրման զօրքերի հագուստը փոխելու և նրան պարզ ձև տալու համար խնայողական նպատակներով։ „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ մի առանձին մասնաժողով է նշանակված արտաքոյ կարգի միջոցներ կազմակերպելու համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 219 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 87 կ., ոսկի 8 ր. 15 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,45 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 87 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ